ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	թիվ 6	*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	Չի հրապարակվել	*Ընդունման վայրը*	Բիշքեկ
Ընդունող մարմինը	Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհուրդ	*Ընդունման ամսաթիվը*	14.04.2017
Ստորագրող մարմինը	Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի անդամներ	*Ստորագրման ամսաթիվը*	14.04.2017
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը		*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԴԻՏՈՐԴ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ ՄՈԼԴՈՎԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ապրիլի 2017 թվականի քաղ. Բիշքեկ

թիվ 6

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԴԻՏՈՐԴ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ ՄՈԼԴՈՎԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվի առնելով Մոլդովայի Հանրապետությանը Եվրասիական տնտեսական միությանն առընթեր դիտորդ պետության կարգավիճակ տալու հարցով Մոլդովայի Հանրապետության նախագահի դիմումը՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 109-րդ հոդվածին համապատասխան, Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհուրդը ***որոշեց.***

1. Ողջունել Մոլդովայի Հանրապետության՝ Եվրասիական տնտեսական միությանն առընթեր դիտորդ պետության կարգավիճակ ստանալու մտադրությունը:
2. Եվրասիական տնտեսական հանձնաժողովին՝ սահմանված կարգով անդամ պետությունների հետ համատեղ մշակել և Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի հերթական նիստի հաստատմանը ներկայացնել Եվրասիական տնտեսական միությանն առընթեր դիտորդ պետության կարգավիճակի մասին Հիմնադրույթը:
3. Կայացնել որոշում Մոլդովայի Հանրապետությանը դիտորդ պետության կարգավիճակ տալու մասին՝ սույն Որոշման 2-րդ կետով նախատեսված Հիմնադրույթը հաստատելուց հետո:
4. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից:

Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից	**Բելառուսի Հանրապետությունից**	**Ղազախստանի Հանրապետությունից**	**Ղրղզստանի Հանրապետությունից**	**Ռուսաստանի Դաշնությունից**